ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2022թ. № 812

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԻՍԱԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետով, 18-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Միսակ Սամվելի Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրի «Վանաձորի խճուղի, թիվ 36» հասցեում գտնվող, 06-087-0189-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,3 հեկտար մակերեսով հողամասի վրա 2019 թվականին ինքնակամ կառուցված վարչական շենքի, բաց պատշգամբի, կոմպրեսորային կայանի, կուտակիչների, սանհանգույցի, տաղավարի, ծածկի, պարիսպների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք

ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 2679487 վկայականը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիը 2022TYCFPQ և Միսակ Սամվելի Հովակիմյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրի «Վանաձորի խճուղի, թիվ 36» հասցեում գտնվող, Միսակ Սամվելի Հովակիմյանին (ծնված 07.05.1968 թվականին) սեփականության իրավունքով պատկանող, 06-087-0189-0008 կադաստրային ծածկագրով 0,3 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Միսակ Սամվելի Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրի «Վանաձորի խճուղի, թիվ 36» հասցեում գտնվող, 06-087-0189-0008 կադաստրային ծածկագրով 0,3 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 112,10 քառակուսի մետր մակերեսով վարչական շենքը, 123,50 քառակուսի մետր մակերեսով վարչական շենքի բաց պատշգամբը, 96 քառակուսի մետր մակերեսով կոմպրեսորային կայանը, 21,10 քառակուսի մետր մակերեսով կուտակիչները, 6,0 քառակուսի մետր մակերեսով սանհանգույցը, 6,40 քառակուսի մետր մակերեսով տաղավարը, 131,10 քառակուսի մետր մակերեսով ծածկը և 15,13 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպները ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Միսակ Սամվելի Հովակիմյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Միսակ Սամվելի Հովակիմյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 762 162 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2022թ. № 813

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 745 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-03102022-06-0148 որոշումը և Սերգեյ Հայկի Լամբարյանի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի «Սերգեյ Հայկի Լամբարյանին սեփականության իրավունքով պատկանող 76,4 քառակուսի մետր մակերեսով բնակարանի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 745 որոշման 1-ին կետում «հասարակական» բառից հետո լրացնել «որպես ատամնաբուժարան» բառերով:

2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2022թ. № 814

«ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 06-087-0697-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,00580 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սերվիտուտի (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0076480 վկայականը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Լիպարիտ Աշոտի Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ին սերվիտուտի իրավունքով պատկանող՝ 06-087-0697-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,00580 հեկտար մակերեսով այլ հողատեսք հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ. Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2022թ. № 815

«ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 06-087-0122-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,26080 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սերվիտուտի (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0076480 վկայականը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Լիպարիտ Աշոտի Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ին սերվիտուտի իրավունքով պատկանող՝ 06-087-0122-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,26080 հեկտար մակերեսով արոտավայր հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ. Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2022թ. № 816

ՇԵՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 195-ԱՄՅԱԿԻ, ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԵՎ ՊԱՐԱՍՐԱՀԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Շենավան բնակավայրի վարչական ղեկավար Մխիթար Մխիթարյանի զեկուցագիրը, 2022 թվականի հոկտեմբերի 19-ին՝ Շենավան բնակավայրի 195-ամյակը նշելու, բնակավայրում նոր մարզադահլիճի և պարասրահի բացման առթիվ կայանալիք միջոցառմանը հյուրասիրություն կազմակերպելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 86 710 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» հոկտեմբերի 2022թ. № 817

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՀԱՐՈՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ահարոն Մալխասյանի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Ահարոն Մալխասյանին (ՀՎՀՀ 66833033) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Սարամեջ 1փ. 1տ.» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 41,52 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» հոկտեմբերի 2022թ. № 818

«ՍԱՄՎԵԼ ԽԱՉԻԿՅԱՆ ԷԴԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՍԱՄՎԵԼ ԽԱՉԻԿՅԱՆ ԷԴԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի հոկտեմբերի 24-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՍԱՄՎԵԼ ԽԱՉԻԿՅԱՆ ԷԴԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66901471) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ալեք Մանուկյան փ. շ. 1» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 57,6 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 24
ք. Սպիտակ